Թվային անվտանգության և ցանցերի գործիքներ

15

Գործնական ստուգումներ և դասային առաջադրանքներ

Մարգար Հովհաննիսյան

Գործնական աշխատանքի կանոնները

01 Հանրային սկաներներին տրամադրում ենք միայն հանրային տվյալներ։

02 Գաղտնաբառերի օրինակները հորինված են և չեն օգտագործվելու։

03 Ստուգման արդյունքը մեկնաբանում ենք՝ հաշվի առնելով գործիքի սահմանները։

04 Ակտիվ ստուգումները կատարում ենք սեփական կամ թույլատրված համակարգերում։

VirusTotal

Մի հղում, տարբեր գնահատականներ

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Համադրում է անվտանգության շարժիչների արդյունքները։

ՓՈՐՁԵՆՔ ԴԱՍԻՆ

Ստուգեք հանրային հղում։ Համեմատեք հայտնաբերումները և վերլուծության ամսաթիվը։

Ձրո հայտնաբերումը անվտանգության երաշխիք չէ։

Google Safe Browsing

Google-ի գնահատականը կայքի մասին

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ցույց է տալիս՝ Google-ը հայտնի վտանգ հայտնաբերե՞լ է։

ՓՈՐՁԵՆՔ ԴԱՍԻՆ

Նույն կայքը ստուգեք նաև VirusTotal-ում։ Քննարկեք արդյունքների տարբերությունը։

Նոր վտանգը կարող է դեռ չլինել տվյալների բազայում։

transparencyreport.google.com/safe-browsing/search

urlscan.io

Ի՞նչ կապեր է ստեղծում մեկ էջը

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ցույց է տալիս էջի պատկերը, վերահղումներն ու կապվող դոմենները։

ՓՈՐՁԵՆՔ ԴԱՍԻՆ

Գտեք հանրային կայքի առկա հաշվետվություն։ Ուսումնասիրեք արտաքին կապերը։

Գաղտնի մուտքի հղումներ մի ուղարկեք հանրային սկանավորման։

Have I Been Pwned

Էլփոստը հայտնի արտահոսքերում

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Որոնում է էլփոստը ծառայությանը հայտնի արտահոսքերի տվյալներում։

ՓՈՐՁԵՆՔ ԴԱՍԻՆ

Ցանկության դեպքում ստուգեք սեփական էլփոստը։ Արդյունքը պահեք անձնական։

Արտահոսքում լինելը դեռ չի ապացուցում հաշվի ներկայիս վերահսկումը։

Bitwarden Generator

Պատահական և եզակի գաղտնաբառեր

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ստեղծում է գաղտնաբառեր և բառերից կազմված արտահայտություններ։

ՓՈՐՁԵՆՔ ԴԱՍԻՆ

Համեմատեք 12 և 20 նիշանոց տարբերակները։ Փորձեք նաև բառային տարբերակը։

Դասին ցուցադրված գաղտնաբառը հետագայում մի օգտագործեք։

Bitwarden Password Strength

Գաղտնաբառի ուժի մոտավոր գնահատում

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Գնահատում է գաղտնաբառի կանխատեսելիությունն ու բարդությունը։

ՓՈՐՁԵՆՔ ԴԱՍԻՆ

Հորինված օրինակներով համեմատեք կարճ, կանխատեսելի և երկար տարբերակները։

Իրական գաղտնաբառ մի մուտքագրեք։ Ժամանակի գնահատականը երաշխիք չէ։

BrowserLeaks

Ի՞նչ տվյալներ է հայտնում բրաուզերը

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ցույց է տալիս IP-ն, WebRTC-ի և բրաուզերի հատկանիշները։

ՓՈՐՁԵՆՔ ԴԱՍԻՆ

Համեմատեք սովորական և գաղտնի պատուհանները։ Ո՞ր տվյալներն են նույնը։

Գաղտնի պատուհանը լիարժեք անանունություն չի ապահովում։

ICANN Lookup

Դոմենի գրանցման տվյալները

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ցույց է տալիս հասանելի ամսաթվերը, գրանցողին և nameserver-ները։

ՓՈՐՁԵՆՔ ԴԱՍԻՆ

Գտեք դոմենի ստեղծման ամսաթիվը և սպասարկող nameserver-ները։

Նոր դոմենը կամ թաքցված տվյալներն ինքնին խարդախության ապացույց չեն։

DNSChecker

DNS պատասխաններ տարբեր վայրերից

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Համեմատում է DNS գրառումները տարբեր սերվերներից։

ՓՈՐՁԵՆՔ ԴԱՍԻՆ

Նույն դոմենի համար ընտրեք A, AAAA, MX և NS։ Համեմատեք պատասխանները։

Տարբեր IP պատասխանները կարող են լինել բնական բաշխման արդյունք։

MXToolbox

Փոստային ենթակառուցվածքի ստուգում

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Միավորում է DNS, փոստի և սև ցուցակների ստուգումները։

ՓՈՐՁԵՆՔ ԴԱՍԻՆ

Սեփական դոմենում գտեք MX-ը։ Ուսումնասիրեք SPF և DMARC գրառումները։

Գրառման առկայությունը դեռ չի հաստատում ճիշտ կարգավորումը։

mxtoolbox.com/SuperTool.aspx

Cloudflare Speed Test

Արագությունից բացի՝ կապի որակը

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Չափում է ներբեռնումը, վերբեռնումը, ուշացումն ու jitter-ը։

ՓՈՐՁԵՆՔ ԴԱՍԻՆ

Համեմատեք Wi-Fi և լարային կապը նույն սարքով։ Ի՞նչն է փոխվում։

Արդյունքը կախված է սարքից, Wi-Fi-ից, բեռնվածությունից և չափման ուղուց։

SSL Labs

Կայքի TLS կարգավորումները

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Վերլուծում է սերտիֆիկատը և աջակցվող TLS տարբերակները։

ՓՈՐՁԵՆՔ ԴԱՍԻՆ

Սեփական կայքի համար ստուգեք սերտիֆիկատի ժամկետը և ընդհանուր գնահատականը։

Բարձր գնահատականը վերաբերում է TLS-ին, ոչ կայքի ամբողջ անվտանգությանը։

www.ssllabs.com/ssltest

Internet.nl

Ժամանակակից ստանդարտների աջակցություն

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ստուգում է կապը, կայքը կամ փոստը՝ IPv6, DNSSEC, TLS և այլ չափանիշներով։

ՓՈՐՁԵՆՔ ԴԱՍԻՆ

Սկսեք կապի ստուգումից։ Հետո ուսումնասիրեք սեփական դոմենի մանրամասները։

Միայն տոկոսը բավարար չէ. կարդացեք առանձին ստուգումների արդյունքները։

RIPEstat

IP հասցեի ցանցային պատկանելությունը

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Տալիս է տվյալներ IP բլոկների, ASN-ների և երթուղավորման մասին։

ՓՈՐՁԵՆՔ ԴԱՍԻՆ

Մուտքագրեք սեփական հանրային IP-ն։ Գտեք բլոկն ու այն հայտարարող ASN-ը։

ASN-ը ցանցի նույնացուցիչ է։ Այն չի բացահայտում կոնկրետ օգտատիրոջը։

stat.ripe.net

Jigsaw Phishing Quiz

Իրակա՞ն հաղորդագրություն, թե՞ ֆիշինգ

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Առաջարկում է ճանաչել կեղծ և օրինական հաղորդագրությունները։

ՓՈՐՁԵՆՔ ԴԱՍԻՆ

Քվեարկեք մինչև պատասխանը բացելը։ Բացատրեք՝ ո՞ր նշանն էր որոշիչ։

Լոգոն և գրագետ տեքստը ուղարկողի ինքնությունը չեն հաստատում։

Ամփոփիչ առաջադրանք

Մեկ հարց, համապատասխան գործիք

Կասկածելի հղում. ինչպե՞ս կհամադրեք երկու ստուգում։

Կապը դանդաղ է. ո՞ր ցուցանիշներն եք համեմատելու։

Դոմենի փոստը չի աշխատում. ո՞ր գրառումից կսկսեք։

Ի՞նչ չի կարող ապացուցել ձեր ընտրած գործիքը։